DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

ST. VARTAN CATHEDRAL 25 YEARS 1968-1993

Թիւ 1735
Ապրիլ 14, 1994

Բարեշնորհ
Նորայր Սրկ. Օտապաշեան
Հոգեւոր Մատակարար Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Օհայո.

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 8, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 27, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Տիգրան Արսլանեան
Սերոբ Տէմիրճեան
Սեպուհ Սեդրաքեան
Ռապերթ Տոմպրավսքի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Էջ 4-ի եւ 6-ի ծխական տուրքերու գումարները իրարու չեն համապատասխաներ։ 1994 տարուան պիւտճէն վնաս կը նախատեսէ։ Հաշուեքննիչ Յանձնախումբը չէ յիշած հաշուական տեղեկագիրներուն աղբիւրը (էջ 12)։ Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը ամբողջական չէ. այս տեղեկագիրը պէտք է ստորագրուի Ծխական Խորհուրդի երկու անդամներու կողմէ։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558